ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

## ՈՐՈՇՈՒՄ

### ՍԵՄՅՈՆ ՀԱԽՈՒՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն պետական գործիչ, գիտնական, պրոֆեսոր Սեմյոն Հախումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ. 39/12 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԵՄՅՈՆ ՀԱԽՈՒՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետական գործիչ, գիտնական, պրոֆեսոր Սեմյոն Հախումյանը ծնվել է 1930թ. Երևանում: 1952թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը:

1956թ. աշխատել է Երևանի պետական համալսարանում, 1965-1972թթ. և 1989-2000թթ. եղել է ԵՊՀ ռեկտորի տեղակալ, 1972-1973թթ.՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր:

Սեմյոն Հախումյանը 1973-1988թթ. եղել է ՀԽՍՀ լուսավորության, 1988-1989թթ.՝ ՀԽՍՀ ժողովրդական կրթության նախարար:

1992-2000թթ. եղել է Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 2000-2006թթ.՝ ռեկտորի խորհրդատու, 2011-2016թթ.՝ Հայաստանի կրթության և գիտության նախարարի խորհրդատու:

Հեղինակել է բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնք վերաբերում են հայ-ռուսական գրական կապերին («Մ.Գորկին և Հայաստանը», 1968թ.՝ համահեղինակ):

1954թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, 1991թ.՝ պրոֆեսորի կոչում:

1988թ. արժանացել է ՀՀ Պետական մրցանակի, «Աշխատանքային կարմիր դրոշ» շքանշանի և մի շարք մեդալների:

Սեմյոն Հախումյանին շնորհվել է Հայաստանի վաստակավոր ուսուցչի կոչում, եղել է ՀՀ մանկավարժական ակադեմիայի իսկական անդամ:

Սեմյոն Հախումյանը մահացել է 2016թ. Երևանում:

Պետական գործիչ, գիտնական, պրոֆեսոր Սեմյոն Հախումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ. 39/12 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ա . Սիմոնյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՍԵՄՅՈՆ ՀԱԽՈՒՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սեմյոն Հախումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՍԵՄՅՈՆ ՀԱԽՈՒՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սեմյոն Հախումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ